**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ**
**ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ**

14 մարտի 2025 թվական թիվ 62-Ա

# ՔԱՂԱՔԱՑԻ ԱՂԱՍԻ ԵՂԻՇԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 08-007-0051-0019 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հողային օրնսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 2-րդ մասի դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով, որ օտարվող հողամասը բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 1-ին և 3-րդ ենթակետերի պահանջներին և նույն որոշման 2-րդ կետի համաձայն չի դիտարկվում որպես առանձին գույքային միավոր աճուրդային կարգով օտարման ենթակա հողամաս, հիմք ընդունելով քաղաքացի Գագիկ Վաչագանի Մուրադյանի դիմումը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին՝ որոշում է.

1.Քաղաքացի Աղասի Եղիշի Գասպարյանին (ծնված 11/06/1967 թվական) սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Ախուրյան բնակավայրի, Ջրաշինարարների բանավանի 5-րդ փողոց, 1/10 հասցեի 08-007-0051-0019 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 28,16 քառակուսի մետր մակերեսով հողամասի ընդլայնման համար, դրա հարևանությամբ գտնվող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը հանդիսացող, Ախուրյան բնակավայրի, Ջրաշինարարների բանավանի 5-րդ փողոց, 1/15 հասցեի 08-007-0051-0022 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 17,6 քառակուսի մետր մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարել ընդլայնվող հողամասի սեփականատիրոջը:

2.Սույն որոշման 1-ին կետով օտարվող հողամասի վաճառքի գինը հաստատել կադաստրային արժեքի չափով՝ 21490 (քսանմեկ հազար, չորս հարյուր իննսուն) դրամ:

***Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝***

Կողմ -24 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

Ջ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Ա. ԱՅՎԱԶՅԱՆ
Ս. ՍԻՄՈՆՅԱՆ
Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ
Շ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Ֆ. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՐՇԱԿՅԱՆ
Ն. ՄՈՒՇԵՂՅԱՆ
Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Թ. ՍՈՒՎԱՐՅԱՆ
Մ. ՄՆԱՑՅԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Ա. ԻԳԻԹՅԱՆ
Ա. ՄՔՈՅԱՆ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ՉԱԼՈՅԱՆ
Գ. ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Վ. ԹՈՐՈՅԱՆ
Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Թ. ՍԱՀԱԿՅԱՆ
Ա. ԴՐՄԵՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ**
**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ջ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

14 մարտի 2025 թվական
գյուղ Ախուրյան